“Կանթեղ” կրթամշակութային սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն
Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գործնականության ապահովումը հայոց լեզվի դասերին

Կատարող՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչոհի Հարությունյան Ալվարդ

Մենթեր ուսուցիչ՝ Սուսաննա Սարուխանյան

Բովանդակություն

- Ներածություն
- Հնչյունաբանության գործնական ուսուցումը
- Բառագիտության գործնական ուսուցումը
- Ձևաբանության գործնական ուսուցումը
- Շարահյուսության գործնական ուսուցումը
- Ամփոփում
- Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյոնքներ, ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, հաշվառման կարգը)։
Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների և դիրորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են, որոնք ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսումնառության կազմակերպման տարբեր ձևերի կիրառմամբ, որոնք բխում են ակնկալվող վերջնարդյունքների նպատակներից։
Հանրակրթության կարողունակությունների շարքում առաջնային են լեզվային գրագիտությունը և ըստ իրավիճակի այդ կարողունակությունը արդյունավետ կիրառելը։ Սովորողները տիրապետում են իրենց մայրենի լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են այդ լեզվով և օտար լեզուներով։
Լեզուն դառնում է ամենապիտանի գործիքը ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համար։ Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցման հիմքը։ Սովորողները լեզվական կարողունակության շնորհիվ կարողանում են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ։
Լեզվի գործնական ուսուցումը դառնում է ամենահրատապ խնդիրը ժամանակի համար, քանի որ լեզուն հաղորդակցման ամենակարևոր միջոցն է։ Հետևաբար լեզվի ուսուցման գործնականության ապահովումը բարձր մակարդակի վրա դնելը այսօրվա ամենահրատապ խնդիրներից մեկն է։
Ուսուցչի գերխնդիրն է դառնում նյութի յուրացումը հասցնել այնպիսի մակարդակի, որ վաղվա քաղաքացին կարողանա գործնականում կիրառել իր գիտելիքները առանց

լեզվական և քերականական սխալների։ Հայոց լեզվի ուսուցումը պետք է ունենա գործնական ուղղվածություն, որը հնարավոր է իրականացնել՝ ապահովելով նոր մեթոդներ, հնարներ։ Նպատակահարմար է Հայոց լեզվի գործնական ուսուցումը ներկայացնել ըստ բաժինների։

Հնչյունաբանության գործնական ուսուցումը

Այս բաժինը կազմված է երկու ենթաբաժիններից, և ուսուցումն էլ իրականացվում է ըստ այդ բաժինների.
ա) հնչյունի սահմանում, հնչյունների դասակարգում
բ) շեշտ և հնչյունափոխություն

Առաջին մասի յուրացումը կարևոր է հատկապես այն թեմանի ուսուցման ժամանակ, ինչպիսին են շեշտը և հնչյունափոխությունը, վանկը և տողադարձը, իսկ ուղղախոսությունը ու ուղղախոսությունը հիմնվում են հնչյունական հատկանիշների վրա: Այս բաժինը հող է նախապատրաստում հաջորդ թեմաների յուրացման համար, որոնք ունեն գործնական արժեք: Հնչյունաբանություն բաժնից առանձնապես ցանկանում եմ ընդգծել շեշտի յուրացման կարևորությունը, դրա խիստ գործնական նշանակությունը: Թվում է՝ ամեն ինչ պրզ է՝ հայերենում շեշտը դրվում է բառի վերջին ձայնավորի վրա: Սակայն մեր խոսքում, եթերում հնչած խոսքում ուշադիր ունկնդիրը բազում սխալներ կգտնի: Նախ պետք է նշել, որ հայերենի որոշ բարբառներում ու խոսվածքներում շեշտը վերջին վանկի վրա չի դրվում (օրինակ՝ Լոռվա՝ դասա՛րան, հարթու՛թյուն): Այս տարածաշրջաններում պարապող ուսուցիչներից պահանջվում է լինել խիստ հետևողական, որ հաղթահարվի հայերենի բարբառի հզոր ազդեցությունը: Հաճախ նկատում ենք, որ սովորողները սովորական խոսակցության ընթացքու խստորեն պահպանում են շեշտադրման կանոնները, բայց չափածո խոսքի ընթերցանության ժամանակ, պաշտոնական ելույթներում, հաղորդումներում ամեն ինչ փոխվում է, մոռացվում, աղավաղվում: Սա դպրոցի և ուսուցչի խնդիրն է: Շեշտը այն թեման է, որի ուսուցումը պետք է կրի զուտ գործնական բնույթ և հատկապես գրականության դասերին: Ճիշտ է դժվար է աստունքի դասերին անընդհատ դիտողություն անել և ուղղել աշակերտին, սակայն յուրաքանչյուր սխալ պետք է ուղղվի, թույլ չպետք է տալ, որ սխալ արտասանությունը դառնա սովորություն, որն ուղղելն ավելի դժվար է: Շեշտադրման յուրաքանչյուր սխալի ժամանակ պետք է անմիջապես ընդհատել աշակերտին, ուղղել սխալը, լինել հետևողական, կրկնել տալ մի քանի անգամ: Կարելի է լսել ձայնագրություններ, ունկնդրել խոսքի վարպետների, հատկապես բանաստեղծների աստունքը, այնպիսիք,

որոնք շեշտադրման տեսանկյունից անթերի են: Այսպիսի գործնական աշխատանքները բոլոր դասարաններում կիրառելի են:
Հնչյունափոխությունը հասկանալի դարձնելու համար նախ ուսուցիչը հասկանալի է դարձնում հայերենի շեշտի առանձնահատկությունները՝ **կայուն** և **շարժական:** Քանի որ հայերենը **վերջնաշեշտ** է, շեշտը դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, ուրեմն բառը դեպի աջ աճելիս, երբ բառի վերջիս նոր վանկ է ավելանում, շեշտափոխվում է, որն էլ պատճառ է դառնում հնչյունափոխության: Ուրեմն աշակերտը գործնականում պետք է յուրացնի շեշտի տեղափոխությունը: Կարևորվում է նաև վանկը, վանկերի տեսակները, բառասկիզբ, բառամեջ և բառավերջ հասկացությունները: Աշակերտը հասկանում է, որ բառը հնչյունափոխվում է հոլովվելիս, ածանցվելիս, բառաբարդվելիս, երբեմն նաև հոգնակիի կազմության ժամանակ; Բայց աշակերտը պետք է իմանա, որ հնարավոր է, որ բառը վերջից նոր վանկ ստանա, բայց չհնչյունափոխվի: Ուսուցիչը կարող է ունենալ երևույթը մեկնաբանող աղյուսակ, որում տրվում է մեկնարկային բառը, առաջարկվում է կազմել տրված բառերի հոգնակին, բառին ավելացնել վերջավորություններ, ածանցել կամ բարդ բառեր ստանալ: Սովորողը գործնականում համոզվում է, որ ոչ բոլոր դեպքերում է բառը հնչյունափոխվում:

Բառը	Հոգնակին	Հոլովումը	Բառակազմությունը
տունկ	տնկիներ	տունկի	տնկարան
կամուրջ	կամուրջներ	կամրջից	կամրջակ
հաշիվ	հաշիվներ	հաշվից	հաշվեհամար
անիվ	անիվներ	անիվով	անվադող
ծես	ծեսեր	ծեսի	ծիսակատարություն
խումբ	խմբեր	խմբից	խմբակից
իղձ	իղձեր	իղձով	**ըղձական**
նկարիչ	նկարիչներ	նկարչի	նկարչություն
գինի	գինիներ	գինու	գինետուն

Հայտնի է, որ գրավոր խոսքում հաճախ ուղղագրական սխալներ են թույլ տրվում բաց վանկի **ի** հնչյունափոխության ժամանակ, գրում են գեր**և**արել, ոսկ**եվ**որել, հոգ**և**արք և այլն: Այս տիպի սխալներից խուսափելու նպատակով պետք է հատուկ ուշադրություն դարձնել այս ձևերին, հանգամանորեն բացատրել և հաճախ կրկնել **ի + ա = ե** հնչյունափոխությունը: Նման սխալներից խուսափելուն օգնում է բառակազմությունը: Սովորողը բառակազմական վերլուծությունից հասկանում է, որ եթե մեր բառը բարդ է և երկրորդ արմատը սկսվում է **վ**-ով, իսկ **և**-ով գրելիս բառասկզբի **վ**-ն կորչում է:

Կարող են լինել նաև **եվ**-ով գրելու սխալ դեպքեր՝ հաշվի առնելով, որ սրանց երկրորդ բաղադրիչը **ավոր** ածանցն է. հոգի + ավոր = հոգևոր, կարի + ավոր = կարևոր։
Ի ձայնավորի հնչյունափոխության մի տարածված սխալ ևս հանդիպում է. ոմանք ասում և գրում են պատան**եա**կան, ընտան**եա**կան, սակայն բառակազմական վերլուծության ընթացքում պարզ է դառնում, որ.

պատան (**ի** + **ա= ե)** կան - պատան**ե**կան
ընտան**(ի+ա=ե)**կան - ընտան**ե**կան

Եթե այս և նման բառերը ևս հաճախ կրկնվեին և չանտեսվեին գործնականության պահանջները, սխալները ավելի քիչ կլինեին։ Նույն պատճառում սխալ է գրվում **տարկետում** բառը՝ մտածելով, որ առաջին բաղադրիչը **տարի** բառն է, մինչդեռ մենք ունենք **տար** նախածանցը։ Սխալը կանխելու համար այդ նախածանցով նոր բառեր կազմելը, այդ բառերով բառակապակցություններ և նախադասություններ կազմելը դառնում է անհրաժեշտություն։

Խիստ տարածված է նաև **ույ** երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված սխալը։ Երեխաները գործնականում սովորում են **ույ** երկհնչունը բառակազմության ժամանակ դառնում է **ու։** Ոմանք և՛ արտասանում են **գույնավոր,** և՛ գրում են **գույնավոր։** Հետևողական և գործնական աշխատանքի դեպքում սխալը կկանխվի։ Ուսուցիչը պետք է ուղղի և՛ գրավոր, և՛ բանավոր սխալները և մի անգամ ևս բացատրի **ույ** երկհնչյունի հնչյունափոխությունը։
Զուտ գործնական արժեք ունեն **վանկ** և **տողադարձ** թեմաները։ Ուսուցիչը երբեք չպետք է անտեսի աշակերտի թույլ տված սխալները, պետք է նորից ու նորից բացատրվեն տողադարձի կանոնները, հիշեցվի որ աշակերտները չխուսափեն տողադարձից։ Ամուր հիմք ստեղծելու դեպքում կկանխվեն սխալները։ Անընդհատ պետք է վանկատվեն բառերը աշխատանքը պետք է դարձնել բազմազան, բառերը տողադարձել բոլոր հնարավոր ձևերով։
Ուղղագրության և ուղղախոսության աժինները խիստ կարևոր ենգործնականության տեսանկյունից, ուսուցումն էլ կրում է գործնական բնույթ։ Հյտնի է, որ և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքերը լի են ուղղախոսական և ուղղագրական սխալներով։ Սա նշանակում է, որ ուղղախոսության և ուղղագրության ուսուցման մեջ ևս բազմաթիվ

թերություններ կան։ Աշխատանքը խիստ տարողունակ է, յուրացումը մնում է մակերեսային։ Պետք է վերակառուցել ուղղագրության ուսուցման կազմակերպումը։ Թեմայի առանձնահատկությունը պահանջում է անընդհատ վարժություններ կատարել, չբավարարվել բառացանկերն անգիր տալով, խուսափել ձանձրալի միօրինակություններից։ Անհրաժեշտ է թելադրել մի քանի բառից կազմված բառացանկ, որում բառերն ունենան ուղղագրական ընդհանրություններ, այդ բառերն օգտագործել նախադասությունների մեջ, փոխանակել տետրերը, որպեսզի աշակերտները գտնեն միմյանց սխալները։ Սովորողները այս դեպքում կսովորեն ուղղել ընկերների սխալները։ Չմոռանանք, որ գրագետ դառնում են շատ գրելով, ուրեմն ուղղագրական բառերը պետք է հաճախ գրել տալ։ Աշխատանքները պետք է լինեն հաճելի և բազմազան։ Ուղղագրության յուրացման համար արդյունավետ է քարտային աշխատանքը, որտեղ պահանջվում է լրացնել բաց թողնված բաթեռը, կազմել նախադասություններ, կազմել նույնարմատ բառեր, տեքստեր։ Այս աշխատանքներում կարևոր է բառերի իմաստների բացահայտումը։ Բառայինն աշխատանքները տանել բառազույգերով, որոնք միմյանցից տարբերվում են լծորդ հնչյուններով։ Նման բառազույգեր հետ աշխատանքը հաճելի է դառնում. որդ - որթ, հորդ - հորթ, հարդ - հարթ, դադար - թաթար, գդալ - գթալ, աղտ - ախտ, ուղտ - ուխտ, մեգ - մեկ, մուկ - մուգ, բուկ - բուք, երեկ - երեք, ծագել - ծակել, վարկ - վարգ - վարք, կարկին - կագին, կին - գին և այլն։
Ուսուցման այս ձևի առավելությունը այն է, որ կիրառվում են բազմաբնույթ աշխատնքներ, խուսափում ենք ձանձրալի միօրինակությունից, կազմում ենք նույնարմատ բառեր, յուրացնում ենք բառիմաստները, սովորեցնում են բառօգտագործում։ Ուղղագրությունը և ուղղախոսությունը ուսուցանվում են անբաժան, հետևում ենք ոչ միայն բառերի ճիշտ գրությանը, այև ճիշտ արտասանությանը։ Խմբավորվում են բառերը, առանձնացվում են գրության և արտասանության նույնությունները կամ տարբերություններ ունեցողները, կամ այն բառերն, որոնցում տառերի և հնչյունների անհամապատասխանություն կա։ Կանոնների յուրացմանը զուգահեռ, յուրացվում են նաև այդ կանոններին համապատասխանող բառերը։ Ուղղագրությունը և ուղղախոսությունը տնակա , համառ ու հետևողական, և որ ամենակարևորն է, գործնականություն պահանջող թեմաներ են, որոնց ուսուցումը սկսվում է առաջին դասարանից և շարունակվում կրթության ողջ ընթացքում։ Այս թեմաների յուրացումը հնարավորություն է ընձեռում

միջառարկայական կապերի ապահովմանը: Պետք է օգտագործել բոլոր առարկաների հնարավորությունները: Գրականության ժամերին ևս պետք է անընդհատ հետևել, ոչ միայն բառերի ճիշտ արտասանությանը այլև ուշադրություն դարձնել տեքստում օգտագործված ուղղագրական բառերին, դուրս գրել, վերլուծել, կազմել նույնարմատ բառեր, օգտագործել նախադասությունների: Սովորաբար աշակերտը սխալ է գրում այն բառերը, որոնց իմաստը լավ չի հասկանում, որոնք բառակազմորեն ճիշտ չի վերլուծում: Սրանք հատկապես նման հնչողություն ունեցող բառերն են: Հնչյունափոխության, ուղղագրության և ուղղախոսության կապվում է բառագիտության, ինչպես նաև ձևաբանության հետ: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, գրավոր և բանավոր խոսքերում հանդիպում են բառակազմանկան-ստուգաբանական բնույթի ուղղագրական և ուղղախոսական սխալներ, ուստի բառագիտության ուսուցման ընթացքում հիմնական խնդիրներից մեկը պիտի լինի այդ հարցերին լուրջ ուշադրություն դարձնելը, մանավանդ, որ աշակերտներին շատ է հետաքրքրում: Դրանով ուսուցումը կդառնա առավել գործնական:

Բառագիտության գործնական ուսուցումը

Բառը լեզվի շինանյութն է։ Մեզ շրջապատող աշխարհի բոլոր առարկաները, երևույթները, նրանց բնորոշ հատկանիշները, գործողությունները անվանում ենք բառերի օգնությամբ։ Հարուստ բառապաշարը զարգացած ու գրագետ խոսքի առաջին նախապայմանն է, բայց ոչ վերջնական ապահովող գործոնը։ Ամեն մարդ օգտագործում է իր իմացած բառերի միայն մի մասը, և նա պետք է կարողանա իմացած բառերից ճաշակով և տեղին ընտրություն կատարել, որպեսզի իր խոսքը դառնա գեղեցիկ ու տպավորիչ, արտահայտիչ, ասելիքը լինի դիպուկ։ Սրա համար էլ մարդ պետք է ունենա բառազգացողություն, լավ իմանա բառերի իմաստներն ու իմաստային նրբերանգները։ Բառապաշարի հարստացումը, բառերի իմաստների նրբությունները սովորելը, ճիշտ բառօգտագործումը չեն սկսվում ու ավարտվում վեցերորդ դասարանում, որտեղ ուսումնասիրվում է բառագիտությունը։ Այն իրականում սկսվում է առաջին և ավարտվում տասներկուերորդ դասարանում, ոչ միայն հայոց լեզվի և գրականության, այլև բոլոր մյուս առարկաների դասերին՝ շարունակվելով մարդու ամբողջ կյանքի ընթացքում։ Սա նշանակում է, որ ուսուցիչն իր ամենօրյա համառ ու հետևողական աշխատանքով պետք է հարստացնի աշակերտի բառապաշարը, սովորեցնի բառօգտագործման գաղտնիքները, բառերի արտահայտչական նրբությունները և՛ լեզվի, և՛ գրականության դասերին։ Այս թեմշուրջ շատ են տեսական-մեթոդական և պակասում է հիմնականը՝ գործնականությունը, այսինքն՝ ինչպես անել, որ տեսական գիտելիքները աշակերտը կարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում, բառապաշարը լինի հարուստ, բառերն ընտրվեն ճիշտ, օգտվեն հոմանիշային հարստությունից, խուսափեն բարբառային և օտար բառերից և այլն։ Այս առումով անհրաժեշտ է, որ դասագրքի վարժություններն էլ լինեն ավելի շատ գործնական-կիրառական, ոչ թե միայն ճանաչողական։ Բառապաշարի հարստացմանը մեծապես նպաստում են գործնական վարժությունները, աշակերտին բառօգտագործման հմտություն է տալիս բառը խոսքի մեջ գործածելը։

Բառագիտությունն ուսումնասիրվում է երկու բաժիններով՝ **իմաստաբանություն** և **բառակազմություն։** Այս բաժինների գործնական ուսուցումն անհնար է, եթե ըստ ամենայնի չապահովվի լեզվի և գրականության միջառարկայանակ կապը։ Այն

բառապաշարի հարստացման, բառագործության հմտությունների մշակման և զարգացման կարևոր նախապայման է, ուստի անհրաժեշտ է, որ ուսուցիչներն ավելի գործնական ուղղություն տան բառագիտությանը հատկապես գրականության ուսումնասիրության համատեքստում: Գրականության դասի պարտադիր փուլերից են բառերի բացատրությունը, բառապաշարային, բառիմաստային և այլ աշխատանքները, բառատետրերի կիրառությունը, բայց ավելի արդյունավետ կլինի ուսումնասիրվող բառապաշարով կապակցված խոսք, տեքստ կազմելը, քանի որ բառի իմաստը իմանալուց զատ սովորողի մեջ պիտի մշակվեն բառօգտագործման կարողություններ, բառազուգակցումներ անելու հմտություններ: Անհրաժեշտ է առաջարկել, որ սովորողները սովորած բառերը գործածեն նախադասությունների, ավելի ցանկալի է տարբեր նախադասությունների մեջ և տարբեր իմաստներով, եթե բառը բազմիմաստ է: Աշակերտները պետք է կարողանան նախադասություններ կազմել բառերի ոչ միայն բուն իմաստներով, այլև նրանց փոխաբերական իմաստներով: Աշակերտներին հնարավորություն պիտի տրվի՝ իրենք բացատրեն նաև նոր դասում հանդիպած անծանոթ բառերը: Այսպիսի աշխատանքը աշխուժացնում է նրանց, հատկապես եթե գործ ունենք բարդ բառի հետ: Բարդ բառի իմաստը բխում է բաղադրիչների իմաստներից, սովորողին դա հնարավորություն է տալիս ակտիվանալ, զարգանում է վերլուծական միտքը, կարողությունները, տրամաբանությունը, երևակայությունը, բառզգացողությունը: Եթե բացատրվում է որևէ բառ, այդ բառից կամ նրա արմատից կազմվում են այլ բառեր, հատկապես ուրիշ խոսքի մասեր, ապա անպայման պետք է պահանջել թվարկել այնպիսի բառեր, որոնց իմացությունը կնպաստի ոչ միայն բառապաշարի հարստացմանը, բառակազմական կարողությունների զարգացմանը, այլև այն բանին որ աշակերտը կսովորի, որ նույնարմատ բառերն ունեն իմաստային ընդհանրություններ: Օրինակ՝ **հանդուգն** նշանակում է չափից ավելի համարձակ, որից կարելի է կազմել **հանդգնություն** - չափից ավելի համարձակություն, **հանդգնել** - չափից ավելի համարձակվել, այս բոլոր բառերն անհրաժեշտ է կկիրառել նախադասությունների մեջ: Այսպիսի աշխատանքի կազմակերպումը կամրապնդի նոր բառերի բազմակողմանի յուրացումը: Եվ քանի որ գրականության դասը աշակերտի բառապաշարի հարստացման հիմնական միջոցն ենք համարում, ուստի լեզվի դասերին պետք է պահանջել գրականության դասերին սովորած բառերի օրինակները՝ նորից կրկնելով դրանք:

Հայոց լեզվի դասին տեսական գիտելիքի հաղորդմանը անմիջապես պիտի հաջորդի գործնականն աշխատանք՝ դա դիտելով որպես դասի յուրացման հիմնական նախապայման և դասի հիմնական բաղադրամաս։ Օրինակ, եթե սովորողը բացատրում է բառի բազմիմաստությունը, բերում դասագրքի օրինակները՝ տուն, աչք, գիր, գլուխ, թվարկում դրանց իմաստները, դա դեռ չի նշանակում,թե նա գիտի թեման, հիշյալ բառերի իմաստները, հետևաբար դասի բացատրությունը դեռ ավարտված չէ, դասի յուրացումը ստուգված չէ։ Միայն այս բառերով կազմված նախադասություններով պետք չէ սահմանափակվել, հատկապես որ դրանք բազմիմաստ են։ Կարելի է թելադրել մի քանի բազմիմաստ բառ (հաճախակի գործածվող), աշակերտներին հանձնարարել տետրում գրել այդ բառերի՝ իրենց իմացած իմաստները։ Որպես այլ աշխատանք՝ կարելի է թելադրել նախադասություններ, պահանջել, որ սովորողներն ասեն տարբեր նախադասություններում կրկնվող բառի իմաստները, կազմեն ինքնուրույն նախադասություններ։

Բառագիտություն բաժնի ուսուցման հիմնական նպատակներից մեկը սովորողներին սովորեցնելն է՝ ինչպել օգտվեն բառարանից։ Սա, իհարկե, գործնական բնույթի աշխատանք է։ Դասարան են տարվում տարբեր բառարաններ, կամ դասն անց է կացվում դպրոցական (համայնքային) գրադարանում։ Տրվում են հինգից տասը բազմիմաստ բառեր, աշակերտները գործնականում սովորում են գտնել բառահոդվածները, իսկ որպես տնային աշխատանք ամրապնդում են գիտելիքը՝ հանձնարարելով կազմել փոքրիկ շարադրանք, որում կգործածվեն արդեն սովորած բառերը՝ իրենց բազմիմաստ կիրառություններով։

Ավելի աշխատատար է և հտաքրքիր բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության մասին նյութը (հոմանիշ, հականիշ, համանուն)։

Դիտարկենք հոմանիշների ուսուցման մի քանի գործնական առաջադրանք։

Հոմանիշների առատությունը լեզվի հարստության, ճոխության, արտահայտչական հնարավորությունների և իմաստային նրբերանգներ արտահայտելու լավագույն միջոցն է։ Հայերենը չափազանց հարուստ է հոմանիշներով, որոնք ունեն արտահայտչական անսպառ հնարավորություններ և նրանց ուսուցումը պետք է կրի գործնական բնույթ։ Նախապես կազմված նախադասություններում աշակերտները կարող են փոխել բառերը հոմանիշների համապատասխան կիրառություններով,

շրջանառության մեջ կդրվեն հոմանիշային նորանոր շարքեր։ Հանձնարարում են կազմել նախադասություններ, որոնցում՝
ա) հոմանիշները փոխարինեն միմյանց (վճիտ առվակ - ջինջ առվակ - զուլալ առվակ)
բ) որոնցում հոմանիշները չեն կարող փոխարինել իրար (մաքուր ջուր - մաքուր գրատախտակ, վճիտ ջուր - վճիտ առվակ, բայց ոչ վճիտ գրատախտակ)
Նման օրինակներ կարելի է հանձնարարել նաև տանը։
Հոմանիշներն ունեն գործնական ու գործածական նրբություններ, որոնք նպաստում են խոսքի ճշգրտությանը, քանի որ երբեմն նրանցից մեկը կարող է գործածվել առօրյա խոսքում, սովորակաան խոսակցության մեջ, մյուսը ՝ այլ ոճում (ման գալ - զբոսնել, հիանալ - զմայլվել, անտուն - անօթևա)։ Հոմանիշների գործածության նրբերանգներից է այն, որ դրանք արտահայտում են խոսողի անհատական վերաբերմունքը (դրական կամ բացասական) հաղորդվող տեղեկույթի նկատմամբ։ Օրինակ՝ ուտել և լափել, զոհվել և շանսատակ լինել, սատկել, խմել և կոնծել, լակել և այլն։ Սա ցուց է տալիս համապատասխան հոմանիշի ընտրության կարևորությունը ասելիքը ճշգրիտ արտահայտելու հարցում, քանի որ խոսողն առանց լրացուցիչ բացատրության, լրացուցիչ բառերի արտահայտում է իր վերաբերմունքը կատարված իրողության կամ անձի վերաբերյալ։ Ինչպես տեսնում ենք, սա էլ ունի գործնական, կիրառական նշանակություն, հետևաբար այն չպետք է ուշադրությունից դուրս թողնել, այլ պետք է կատարել վարժություններ, աշակերտներին հանձնարարել նման զույգերով կազմել նախադասություններ։ Ուսուցիչը կարող է նաև թելադրել նախադասություններ բաց թողած բառերով և թվարկել հոմանիշներ՝ համապատասխան տեղերում գրելու։ Այս թեման կամրապնդվի գրականության դասերին՝ փորձելով բնագրի որևէ բառի փոխարեն գործածել նրա հոմանիշը, բացատրել իմաստային նրբերանգները և առկայության դեպքում նաև վերաբերմունքային տարբերությունները։
Կիրառելի աշխատանք է շարադրության հանձնարարումը՝ օգտագործելով հոմանիշային շարքերը։ Պետք է սովորողի ուշադրությունը հրավիրել գրավոր խոսքի մեջ անտեղի կրկնություններին։ Հանձնարարված շարադրությունը ստուգելիս պետք է աշակերտներին ցույց տալ հոմանիշների կամ այլ բառերի գործածության հաճախակի կրկրնությունները, եթե այդպիսիք կան։ Հետաքրքիր գործնական աշխատանքներ են ստացվում բարբառային կամ օտար բառերի և դրանց համարժեքության շուրջ։

Շատ ավելի հետաքրքիր են բառակազմական բաղադրիչների՝ արմատի, ածանցի, բարդությունների շուրջ գործնական աշխատանքները: Դրանց շուրջ տեսական գաղափար տալուց հետո անպայման պիտի ստուգել գիտելիքները և յուրացումն ամրապնդել գործնական վերլուծություններով, վարժություններով, քանի որ գրավորներում հաճախակի հանդիպող ուղղագրական սխալների պատճառը բառի կազմությունը, բաղադրիչների չճանաչումը կամ չիմացությունն է: Որպեսզի ապահովենք բաղագիտության գործնականությունը, պետք է հանձնարարել ոչ միայն բառերը վերլուծել ըստ բաղադրիչների, այլև գտնված արմատներով և ածանցներով կազմել նոր բառեր, դրանք գործածել նախադասության մեջ, վարժությունները դարձնել բազմազան և բազմաբնույթ, սովորողներին կազմել նկարելուկներ, հանելուկներ, խաչբառեր, փոխանցել միմյանց, ստուգել կատարումը (տնային աշխատանքներ,արտադասարանային աշխատանքներ): Սովորողների բառապաշարի հարստացման,բառի ճիշտ գործածության նրբությունները սովորեցնելու հարցում անգնահատելի դեր ունեն շարադրությունները, փոխադրությունները և հատկապես դրանց վերլուծության ճիշտ կազմակերպումը, քանի որ հաճախ այդ աշխատանքների վերլուծությունը չի տարբերվում թելադրության վերլուծությունից, այսինքն՝ ուշադրություն է դարձվում հիմնականում ուղղագրությանը: Առաջարկում եմ հանձնարարել փոքրիկ շարադրություն կամ փոխադրություն, որ հնարավորություն լինի ընթերցել դասարանում, վերլուծել աշակերտներ օգնությամբ, ցույց տալ ոչ միայն սխալները, այլև բառի ճիշտ ընտրությունն ու տեղին գործածությանունը, գնահատել նորաստեղծ բառերը (եթե կան այդպիսիք): Գնահատել նորարամուծությունները, զարգացնել բառօգտագործման ճաշակ: Ուսուցիչը պետք է ուշադիր լինի, քանի որ բառերի գործածության հաճախականությունը փոխվում է և դրանք կյանքում լինում են կենսունակ և ոչ կենսունակ: Եթե կենսունակ բառերը օգտագործվում են ամեն օր, ապա ոչ կենսունակ բառերը՝ ոչ այնքան հաճախ, առանձին դեպքերում: Ուսուցչի խնդիրն է սովորեցնել կենսունակ, առաջին անհրաժեշտության բառերը դարձնել աշակերտի սեփականությունը, հարստացնել նրա ակտիվ բառապաշարը, նոր միայն անցնել ոչ կենսունակ բառերին: Խոսքի գեղեցկության առաջին նախապայմանը բառերի ճիշտ և տեղին գործածությունն է, լեզվի օրենքների և օրինաչափությունների պահպանումը: Եթե աշակերտը դեռ չի կարողանում կենսունակ, գործածական, առօրյա խոսակցության համար անհրաժեշտ բառերը ճիշտ և տեղին գործածել,

գրագետ խոսք կազմել, ապա քիչ գործածական բառեր պարունակոց խոսքը չի կարող գրագետ լինել, և ինչ-որ տեղ այն դառնում է կեղծ, ոչ կենդանի: Ոչ կենսունակ բառերով գունազարդված, պաճուճապատված խոսքը ևս համարվում է թերություն; Բառապաշարի հարստացման շուրջ գործնականությունն ավահովում ենք արդեն գրականության դասերին՝ գրական երկը ընթերցելու, հերոսների կերպարները վերլուծելու, երկի վիպաշարը, գեղագիտությունը ներկայացնելու ժամանակ: Կարելի է, օրինակ, որ ուսուցիչը թելադրի հատկանշական բառեր, իսկ սովորողները դրանք բաշխեն ըստ ուսումնասիրվող ստեղծագործության աղյուսակի: Այսպես՝ բարի, չար, գծուծ, խեղճ, խիղճ, անմարդկային, բարեհամբույր, տգետ, փոքրոգի, նվիրված, մեծահոգի, անխիղճ, աշխատասեր, ծույլ, խարդախ, խորամանկ, անօրեն, միամիտ, բռնակալ … բառերը բաշխիր ըստ հերոսների.

Համբո	Գիքոր	Արտեմ	Նատո	Դեդի	Գալո

Սովորողներն իրենք էլ կարող են կամել նման աղյուսակներ միմյանց համար: Բառագիտության ուսուցումից անբաժան է ուղղագրությունը, ավելի ճիշտ՝ ուղղագրության ամբողջական ուսուցումը, սխալների կանխումն անհնար է առանց անհրաժեշտ բառակազմական գիտելիքների, դրա համար է վարժություններ կատարելիս ուսուցիչը անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնի սխալի տեղիք տվող բաղադրիչներին, ինչպես՝ տնօրեն, անօրեն, մեղմորեն, հյուրընկալ, լուսնկա, հանդիպակաց, սրընթաց, խոչընդոտ, որոտընդոս, ընդհամենը, ընդհուպ, ընդհանուր, ընդդեմ, գործուղել, ուղղահայաց, զարտուղի, վերելք, վայրէջք, ոսկեվարս, ոսկևորել և այլն: Բառագիտությունն ուսումնասիրելիս պետք է ուշադրության կենտրոնում պահել և հարկ եղած դեպքում կրկնել ինչպիսիք են հնչյունափոխությունը ուղղախոսությունը, որովհետև դրանք կրկնելու անհրաժեշտություն և հնարավորություն ստեղծվում է:

Ձևաբանության գործնական ուսուցումը

Եթե նախորդ բաժիններն ուսումնասիրելիս, այս կամ այն չափով ապահովում է ուսուցման գրծնականությունը՝ ելնելով նյութի բնույթից, ապա վիճակը համեմատաբար վատ է շարահյութսության, մանավանդ ձևավանության ուսուցման ընթացքում: Ձևաբանությունն անցնելիս ավելի շատ խոսվում է խոսքի մասերի, նրանց բնորոշ քերականակ փոփոխությունների, կարգերի մասին, և ուսուցումն ավելի հաճախ կրում է զուտ տեսական բնույթ, այսինքն՝ սովորեցնում ենք ոչ թե լեզու, այլ քերականություն: Բառապաշարը խոսքի համար միայն շինանյութ է , դեռ շենք, կառույց չէ: Պետք է կարողանալ այդ շինանյութը համապատասխան մշակման ենթարկել, փևափոխել և ըստ լեզվի կապակցական օրինաչափությունների միացնել, շենք դարձնել: Հենց այս կարևոր գործը աշակերտները սովորում են քերականություն սովորելիս: Այս հարցում է, որ լեզվի (ձևաբանության) ուսուցումը դպրոցում սերտորեն կապակցում է ձևաբանությունը և շարահյութսությունը, քանի որ քերականական ձևերի գործնական ուսուցման պահանջը ենթադրում է դրանց ուսուցում կապակցված խոսքի մեջ, և պատահական չէ, որ դպրոցական ծրագրում ձևաբանությունն անցնելուց առաջ նախատեսվում է ընդհանուր ծանոթություն շարահյուսության հիմնական հասկացություններին: Քերականության ուսուցումը դառնում է ինքնանպատակ, եթե այն կտրվում է կենդանի խոսքից, գեղարվեստական խոսքից: Երեխան քերականական ձևերը պետք է տեսնի ոչ միայն գրատախտակին կամ դասագրքի վարժություններում, այլև բանավոր խոսքում, տեքստեր կազմելիս: Պիտի կարողանա այդ ձևերը օգտագործել իմանալ: Որպես գրագետ խոսքի նմուշ կարող են դառնալ գրականության դասը, դասագրքի վարծությունները, աշակերտների շարադրությունները:
Իբրև տնային աշխատանք հիմնականում ամրապնդում ենք դասարանում ուսումնասիրած քերականական նյութը, ինչպես՝ որոշել հոլովը, թիվը, սեռը, դեմքը և այլն: Քերականական ամեն մի ձևի հատկաիշները ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ է կազմել դրա նման ձևեր, կիրառել նախադասությունների մեջ: Լավագույն ուսուցիչն ուշադրություն է դարձնում վարժությունների կատարմանը, քան դասի հարցմանը՝ տեսական մասը կրկնել հարցնելուն: Օրինակ՝ բացառական հոլովն անցնելուց հետո տրվում են բառեր, որոնց բացառականը պիտի կազմվի: Մենք կազմում են նախ բոլոր հոլովների ցանկը, ապա մեկ-մեկ հոլովում բոլոր

գոյականները, կազմել նախադասություններ (գրավոր կամ բանավոր), պատասխանում հարցերին: Բացառական հոլովի կիրառությունը կարելի է գործնականորեն ամրապնդել նաև կապերի հետ կիրառումը վեր հանելով: Շատ հետաքրքիր գործնական աշխատանքներ է ենթադրում հոլովների ուսուցումը: Պետք է ուշադրություն դարձնել զուգաձևություններին, այլաձև հոլովմանը: Այս թեմայով ևս սովորողն առնչվում է կենդանի և հարափոփոխ օրգանիզմին հայոց լեզվին: Նա գիտակցում է, որ լեզվական իրողությունները կարող են ունենալ զուգաձևություններ, և դրանք հաշվի առնելով՝ չի առաջանա կտրվածություն խոսակցական և գրավոր տարբերակների միջև: Որպես օգնություն ուսուցչին կարող ենք առաջարկել Մ. Ասատրյանի “Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր” աշխատությունը: **Ու** հոլովման բառերը զուգաձևեր ունեն սեռական-տրականի կազմության մեջ (Լոռու - Լոռիի - Լոռվա, Մեղրու - Մեղրիի, Անու - Անիի, բանալու - բանալիի): **Ան** հոլովման բառերը՝ ցասման - ցասումի, ծնկան - ծնկի, թոռան - թոռի: **Ոջ** հոլովման դեպքում՝ սկեսրոջ - սկեսուրի, տեգրոջ - տեգոր - տեգրի, տալոջ - տալի: Նաև՝ սգի - սգո, հանգստի - հանգստյան, գալուստի - գալստյան, կայսրի - կայսեր, դուստրի - դստեր: Անհրաժեշտ է սովորողների մոտ ամրապնդել այս զուգաձևությունների ոճական-արտահայտչական դերն ու նշանակությունը: Դասագրքում յուրաքանչյուր նյութի բացատրությունից հետո տրվում են առնվազն երկու- երեք վարժություններ, որոնք տարբեր բնույթի են: Դա արված է որոշակի մտադրումով, ուրեմն պետք է կատարել բոլոր վարժությունները,, լրացնել բացը նորերով:

Հասարակ և հատուկ գոյականներն անցնելիս կարևորը բաղադրյալ հատուկ անունների գրության ուսուցումն է, որն ունի զուտ գործնական արժեք և բավականին դժվար յուրացվող թեմաներից: Պետք է անընդհատ վարժություններ կատարել, թելադրություններ գրել: Այստեղ տեսականը պետք է լավ սովորել, հատկապես անգիր իմանալ բաղադրյալ հատոիւկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրելու դեպքերը, կանոնները: Այս իմացությունը նպաստում է նաև միայն առաջին բաղադրիչը մեծատառող գրվող բառերի յուրացումը: Գոյականի թիվը անցնելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն բարդ բառերի հոգնակիի կազմության ուսուցմանը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է (օրինակ՝ հեռագիր, ձեռագիր - մանկագիր, առակագիր, հանքահոր - հանքափոր): Առանձնակի պետք է ուշադրություն դարձնել հոգնակիի կազմության ժամանակ տեղի ունեցող հնչյունափոխությանը:

Ածականը գործնական արժեք ունեցող խոսքի մաս է։ Այստեղ հատկապես գործնական կիրառություն ունեն ածականի համեմատության աստիճանները,ածականների և գոյականների կապակցությունները, ածականի գործածությունը գոյականաբար։ Այս հարցերը պետք է ուսումնասիրվեն հանգամանորեն, կատարվեն վարժություններ, կազմվեն նախադասություններ։ Ածականի համեմատության բաղդատական աստիճանը կարելի է արտահայտել ոչ միայն ավելի բառով, այլ նաև նույն իմաստը կարելի է արտահայտել գոյականի բացառական հոլովով։ Օրինակ՝ Արմինեն ավելի համեստ է։ Արմինեն Անիից համեստ է։ Նվազական կամ առավելական իմաստ կարող են արտահայտել նաև ածանցները՝ **-ավուն, -իկ, -ին, -գին** (կանաչավուն, փոքրիկ, դժվարին, քնքշագին)։ Իսկ հատկանիշի հավասարությունն արտահայտվում է **նման, պես, չափ** կապերով, **ինչպես** հարաբերական դերանունով։ Գերադրականի իմաստ արտահայտվում է ոչ միայն **ամենա-** և **-ագույն** մասնիկներով, այլև **գեր-** նախածանցով։ Բացի դրանցից գերադրական իմաստն արտահայտվում է ածականի հետ **բոլոր** և **ամեն** բառերի բացառական հոլովը գործածելով (օրինակ՝ ամենից բոլորից գեղեցիկ), ածականի կրկնությամբ (լավերից լավը, լավից լավը), ժխտական կառույցներով (Սրանից գեղեցիկ շենք չկա։), բազմափիվ ածականներով և մակբայներով, որոնք դառնում են ածականի լրացում՝ **շատ, խիստ, անչափ, անսահման, անասելի, ծայրահեղ, վերին աստիճանի, բացառիկ. արտակարգ**։ Անհրաժեշտ է անընդհատ շեշտել, որ սովորողները չգործածեն ածականի գերադրական աստիճանի կազմման սխալ ձևեր՝ ամենալավագույն, ամենպարզագույն…

Դերանունի գործնական ուսուցման հետ կապված կարևոր ենք համարում դերանունների հոլովման և հոգնակիի կազմության առանձնահատկությունները, դերանունների և գոյականների կապակցությունները, ուղղագրությունը։ Խոսքում հաճախակի հանդիպում են և շփոթում **նա** և **ինքը** դերանունները, որոնք մատնանշում են երրորդ դեմքի անձ։ Սովորաբար **ինքը** դերանունը գործածվում է մեկ անգամ արդեն հիշատակված անձը նշելու համար։ Նման դեպքերում **նա** դերանունը նշանակում է չորրորդ անձ։

Օրինակ՝ *Հանդիպեցի Վահանին և նա ասաց, որ **նա** մասնակցելու է գրականության օլիմպիադային։* և՝ *Հանդիպեցի Վահանին և նա ասաց, որ **ինքը** մասնակցելու է գրականության օլիմպիադային։*

Առաջին նախադասության մեջ օլիմպիադային մասնակցողը Վահանը չէ, այլ մի ուրիշ անձ, ասենք՝ Արամը, իսկ երկրորդ օրինակում օլիմպիադային մասնակցողը Վահանն է՝ ինքը։
Նա և **ինքը** դերանունների շփոթությունը կարող է առաջացնել մտքի շփոթ։
Անձնական դերանունները ուսուցանելիս պետք է սովորեցնել, որ **ես - մենք**, **դու - դուք** դերանունները հաճախ խոսքի մեջ չեն գործածվում, քանի որ նախադասության ստորոգյալի դեմքից և թվից հասկացվում են։ *Ես գիտեմ, իսկ դու չգիտես։* -
Նմանատիպ նախադասությունների մեջ գործածվում են դերանունները, քանի որ առկա է դեմքերի հակադրությունը։
Գործնական նշանակություն ունի նաև քաղաքավարական ձևերի ուսուցումը՝ **Դուք** և **նրա** հոլովաձևերը։
Բայը լեզվի դասընթացի ամենածավալուն թեման է և միշտ եղել է ուշադրության կենտրոնում։ Հաճախ և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում հանդիպում են բայաձևերի սխալ կազմության և գործածության բազմաթվ դեպքեր, որոնք անդրադառնում են խոսքի ճշգրտության վրա։ Բայի ուսուվման համակարգում շատ են հատկապես տեսական բնույթի հարցերը, որոնց բացատրությունը պետք է տանել կազմակերպված, աշակերտների ակտիվ մասնակցությամբ, որպեսզի նրարնք լավ պատկերացնեն բայի և բայահիմքերի, անդեմ և դիմավոր ձերեի կազմությունը, նրանց արտահայտած իմաստները, որոնք անհրաժեշտ են խոսքի մեջ բայաձևերը ճիշտ կազմելուն և գործածելուն, և որոնք հիմք են ստեղծում՝ ապահովելու գործնական ուսուցումը, քանի որ նյութի գիտակցական յուրացումը գիտելիքները գործնականում կիրառելու առաջին նախապայմանն է։ Բավական չէ, որ աշակերտը իմանա, որ սահմանական եղանակի հինջ ժամանակաձևերը արտահայտում են անցյլում կատարվածմ կատարվող կամ կատարվելիք գործողություն՝ *գնում էի, գնալու էի, գնալու էի, գնացել եմ, գնացել էի, գնացի*, անհրաժեշտ է իմանալ նրանց տարբերությունները։ Սահմանական եղանակի շուրջ բավականին տեսական գիտելիքներ ստանալուց հետո սովորողը պետք է տիրապետի նաև ժամանակաձևերի իմաստային տարբերություններին։ Սխալները հիմնականում հանդիպում են անցյալ կատարյալի կազմության մեջ, հատկապես **չ** սոսկածանց ունեցող պատճառական բայերի։ Խիստ տարածված է *հասցրեցի, հատկացրեցի, մոտեցրեցի, վախեցրեցի* սխալ ձևերը։ Ճիշտը բացատրելու համար պետք է կողք կողքի գրել ճիշտ և սխալ ձևերը.

հասկացրի - **հասկացրեցի**

հասցրի - **հասցրեցի**
մոտեցրի - **մոտեցրեցի**

Հիշեցնել անցյալ կատարյալի վերջավորությունները՝ **-ի, -իր, - , -ինք, -իք, -ին**։ Անցյալի հիմքը՝ *հասկացր, հասցր, մոտեցր* …, ուրեմն ճիշտ ձևերն առաջին սյունյակի բառերն են։ **Չ** սոսկածանց ունեցող բայերի որոշ բայաձևերը կազմվում են սխալ՝

կորչել - կորել - կորչել է
դիպչել - դիպել - դիպնել
կպչել - կպել - կպնել

Սխալներ են հանդիպումնաև հրամայականի կազմության ժամանակ։ Որոշ բայերի զուգաձևություններ ունենք։ Շատ հետևողական աշխատանք է պետք սխալներից խուսափելու համար։
Հիշել որ արգելական հրամայականը ունի միայն մեկ ցուցիչ՝ **մի** արգելականը, որը միանում է բոլոր դրական հրամայականներին։ Մյուս ձևերը սխալ են։
Անկանոն բայերի կազմությունը հասկանալի դարձնելու արդյունավետ սկզբունքը կանոնավոր բայերի խոնարհման ձևերի հետ համեմատելն է։
Մյուս խոսքի մասերի գործնական ուսուցումը ապահովել հնարավոր է միայն կապակցված խոսքում, նախադասությունների մեջ, շարահյուսական մակարդակում։

Շարահյուսության գործնական ուսուցումը

Լեզվի յուրաքանչյուր մակարդակի միավոր կառուցվածքային տարր է հաջորդ մակարդակի միավորների համար: Շարահյուսությունը ամենավերին մակարդակն է, նշանակում է՝ հիմնվում է նախորդ մակարդակների վրա, և նրա ուսուցումը յուրատեսակ ամփոփում է նախորդ բաժիններում, հատկապես ձևաբանության բաժնում անցած նյութին, նրանց գործածությանը, կիրառությանը: Եթե նախորդ բաժիններում ապահովված է գործնական ուսուցումը, ապա շարահյուսության գործնական ուսուցումը մասամբ արդեն ապահովված է, նախապատրաստված: Այստեղ ևս խիստ անհրաժեշտ են գործնական վարժությունները:Քանի որ լեզուն հաղորդակցման հիմնական միջոցն է, իսկ հաղորդակցման հիմնական միավորը նախադասությունը, և նախադասությունների ճիշտ կառուցվածքը ենթադրում է խոսքի ճիշտ կառուցվածք, ասելիքը գրագետ արտահայտելու կարողություն, որը լեզվի ուսուցման հիմանական խնդիրն է: Շարահյուսություն ուսումնասիրելիս սովորողներն ունեն լեզվական անհրաժեշտ հիմք, վերացարկման և ընդհանրացման ավելի բարձր կարողություններ, ավելի զարգացած է մտածողությունը:
Աշակերտի բանավոր և գրավոր խոսքը վերլուծաբար քննարկելիս հասկանում ենք, որ ավելի հաճախակի են կապակցական սխալները. նախադասության ոչ ճիշտ կառուցվածք, խնդրառական սխաներ, անհամաձայնություն, զեղչման դեպքերի անտեսում, սխալ շարադասություն, կետադրում և այլն: Սրանք հետևանք են շարահյուսության ոչ ոչ գործնական ուսուցման:Անտեսվում են նախադասության անդամների իմաստային հարաբերությունը և դրա արտահայտման եղանակների, ձևերի վերլուժությունը, չեն բացատրվում հաճախ հանդիպող սխալները:
Բառակապակցության գործնական ուսուցումն ունի երկու փուլ.
ա) գաղափար բառակապակցության մասին և վարժություններ նրա վերաբերյալ
բ) բառակապակցության (նաև նախադասության) անդամների կապակցության եղանակներ՝ առդրություն, խնդրառություն, համաձայնություն:
Սրանք ընկած են շարահյուսության բոլոր կապակցությունների հիմքում:
Լեզվաբանության մեջ բառակապակցություն համարվում է երկու և ավելի բառերի կապակցությունը լրացում-լրացյալ հիմքի վրա: Առաջին փուլում տեքստից պետք է դուրս գրել բառակապակցությունները՝ որոշելով լրացյալի խոսքիմասային

պատկանելությունը: Օրինակ՝ *Ձյան փաթիլները մեղմորեն ճախրում էին ձմեռային ցուրտ երկնքում*: Խմբավորում ենք բառակապակցությունները, ընդգծում լրացյալները:

ձյան <u>փաթիլներ</u>
ձմեռային <u>երկնքում</u>
ցուրտ <u>երկնքում</u>
մեղմորեն <u>ճախրել</u>
<u>ճախրում էին</u> երկնքում

Երկրորդ փուլում աշակերտները իրենք են կազմում նախադասություններ՝ գերադաս (լրացյալ) ունենալով գոյականը կամ բայը: Այստեղ աշխատանքները կարող են լինել բազմաբնույթ: Ուշադրությունը պետք է կենտրոնացնել բառերի իմաստային կապակցությանը: Այս աշխատանքներից հետո պետք է անցնել կապակցության եղանակներին: Առդրական բնույթի կապակցական սխալները սովորաբար չեն լինում, եթե անտեսենք բառերի իմաստային կապակցության սխալները: Շատ են հատկապես խնդրառությանը և համաձայնությանը վերաբերոց կապակցական սխալները, հետևաբար սրանց պետք է լուրջ ուշադրությունդարձնել, անընդհատ վարժություններ կատարել:

Համաձայնությունը կապվում է ենթակայի ու ստորոգյալի և բացահայտչի ու բացահայտյալի կապակցությանը: Սրանք առանփին , թեմաներ են, որոնք անցնելիս համաձայնությունը պետք է մղվի առաջին պլան: Պետք է կրկնել համաձայնությանը առնչվող ձևաբանական հասկացությունները, կատարել վարժություններ, վերլուծել, բացատրել սխալները:

Խնդրառությունը (կառավարում) կապակցության այն եղանակն է, որ պայմանավորվում է գերադաս բառի մի շարք հատկանիշներով (բառիմաստ, խոսքիմասային պատկանելություն, բայի սեռ, կազմություն) և արտահայտվում է իբրև հոլովառություն և հոլովակապառություն, բնորոշ է տարբեր խոսքի մասերի (բայ, գոյական, ածական, կապ), խնդրառությամբ կապվում են նախադասության տարբեր անդամներ, հիմնականում խնդիրներ և պարագաներ, այլ խոսքով խնդրառությունը բավականին ընդգրկուն է: Խոսքում հաճախակի են խնդրառական բնույթի սխալները, այդ իսկ պատճառով խնդրառության գործնական ուսուցմանը պետք է առավել

ուշադրությունն դարձնել: Պետք է հենվել ձևաբանությունից ունեցած գիտելիքների վրա, կրկնել բառի սեռը, դրանով պայմանավորված՝ նրանց խնդիր լրացումները, կրկնել կապերի հոլովառությունը և տալ խնդրառության ընդհանուր բնութագիրը և կատարել գործնական վարժություններ: Գրվում են տարբեր սեռ բայեր և ասում նրանց խնդիր լրացումները: Չենք մոռանում կրկնել հայցական հոլովը:

ներգործական սեռ	կրավորական սեռ
հասկանալ	հասկացվել
հիշել	հիշվել
չորացնել	չորացվել
հավաքել	հավաքվել
մոտեցնել	մոտեցվել

Պահանջել բայի կողքին գրել խնդիրները և՛ անձի, և՛ իրի անուններով արտահայտված: Պետք է տալ նաև խառը բայախմբեր:
Առանձին ուշադրություն պետք է դարձնել նախադասության անդամների շարադասությանը, որն ունի զուտ գործնական արժեք: Շարադասությունը նախադասության անդամների դասավորության ընդունված կարգն է: Հայարենի շարադասությունը բավականին ճկուն է, ազատ, բայց ոչ անսահման ազատ: Պետք է ցույց տալ շարադասության ոճական-արտահայտչական արժեքը: Շարադասություն թեմային անմիջականորեն առնչվում է նախադասության անդամների տրոհումը, որը գրավոր խոսքում արտահայտվում է կետադրական նշաններով, իսկ բաննավոր խոսքում հնչերանգներով:

Ամփոփում

Շարադրելով լեզվի գործնական ուսուցման վերաբերյալ մի շարք հարցեր, մեթոդներ, եղանակներ, ուսուցման ձևեր, հնարավորություն չունենալով անդրադառնալ բոլոր հարցերին, վերջում նշենք, որ դասն ամենից առաջ ուսուցչի ստեղծագործությունն է, և նա ուսուցման ընթացքում անշուշտ օգտվում է այլ ձևերից, մեթոդներից, եղանակներից։ Ուստի և դպրոցների առարկայական հանձնաժողովների հիմնական խնդիրներից մեկը պիտի լինի առաջավոր ուսուցիչների փորձի ուսումնասիրությունը և դրա օգտագործումը, ուսուցման ավելի արդյունավետ ձևերի պրոպագանդումը։ Բայց ինչպես էլ կազմակերպելու լինենք լեզվի դասը, լեզվի ուսուցումը, ինչքան էլ ուշադիր լինենք գուրծնականությունն ապահովելու պահանջի նկատմամբ, միևնույն է, արդյունքը գոհացուցիչ լինել չի կարող, եթե բոլոր առարկաների ուսուցիչները և մասնավորապես հայոց լեզվի և գրականության ուշադիր չէ աշակերտի խոսքի նկատմամբ, որտեղ էլ լինի, ինչպես էլ արտահայտվի՝ դասի ժամանակ, դասամիջոցին, զրույցների։ Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է հետևողականորեն ուղղել նկատվող ամեն մի սխալ, թույլ չտալ, որ դրանք դառնան սովորական, վերածվեն օրինաչափության, որ աշակերտը դասը պատմի այլ լեզվով, անտեսի գրական լեզվի կանոններն ու օրինաչափությունները։ Ուրեմն՝ աշակերտի գրագետ խոսքի համար պայքարելը բոլորիս պարտքն է, լեզվի գործնական ուսուցումն ապահովելու անհրաժեշտ նախապայմանը։

Օգտագործված գրականության ցանկ

- Մ. Ասատրյան “Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր” Ա հատոր
- “Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ”, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, Վանաձոր. 2008թ.
- ՀՀ պետական առարկայական չափորոշիչ
- http://publishing.ysu.am/en/1462877983